

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Բանագիտական ակնարկներ, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 264 էջ:



ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված վերոհիշյալ աշխատության մեջ բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանը ուսումնասանկավարժական նկատառումներով քննության է առել բանահյուսության առարկան և, իբրև բանասիրական գիտությունների առանձին բնագավառ, ճշգրտել է վերջինիս անվանումների ու հատկանիշների իմաստային առումները, լուսաբանել բանագիտության սկզբնավորման ու զարգացման պատմությունը, հայ բանագիտության անցած պատմական ուղին և ժանրային ամբողջական համակարգը: Գրախոսվող գրքի կարիքը շատ վաղուց էր զգացվում: Հեղինակը վերոհիշյալ կարևոր հիմնահարցերի ուսումնասիրությունը կատարել է հրնթացս երկարամյա

դասախոսական և հետազոտական աշխատանքների, իսկ վերջին հինգ տարիներին այն ամբողջացրել է, համալրել նորովի շարադրված մասերով, որպեսզի ծառայեցնի իր առաջադիր նպատակներին՝ ուսանողների ու ասպիրանտների՝ առարկայի տեսության ու պատմության յուրացմանը, գիտատեսական խնդիրների լուսաբանմանը:

Հարցի պատմությունը վերաբերող սկզբնաղբյուրների նկատմամբ հեղինակը ցուցաբերել է քննական մոտեցում, համեմատել և վերլուծել բազմաթիվ գիտական տեսակետներ, կատարել անհրաժեշտ ճշգրտումներ:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երեք մասից (որոնցից յուրաքանչյուրն ունի իր համապատասխան ենթամասերը) և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, բանահյուսական բնագրերում առկա ավանդական մտածողության արքետիպային կադայարներով վերաձևված իրականության էթնիկամշակութային իրողությունները: Խոսելով մենագրության գործնական նշանակության մասին՝ հեղինակը ցույց է տվել, որ բանահյուսությունը ստանձնում է գործառնական ակտիվ դեր և գեղարվեստական խոսքով ու մտածողությամբ արտացոլում կյանքի ու մշակույթի տարբեր բնագավառներին առնչվող ժողովրդական պատկերացումները:

Աշխատության առաջին մասը, որը կրում է «Բանահյուսությունը և նրա հատկանիշները» վերնագիրը, բաղկացած է հինգ ենթամասերից՝ 1. «Առարկան և նրա անվանումները», որտեղ որոշարկված տերմինները լայն հեռանկարներ են մատնանշում միասնական օրինաչափությունների հետազոտման և մեթոդաբանության ենթարկման առումով: 2. «Էական հատկանիշները» ենթամասում ժողովրդական բանահյուսությունը ներկայացվում է

իբրև գեղարվեստական մտածողության բարդ, բազմահատկանիշ համակարգ՝ բազմաթիվ կողմերով կապված հասարակական գիտակցության ու կեցության այլևայլ ձևերի հետ: 3. «Բանահյուսության բուն առանձնահատկությունները» համապատասխանաբար դրսևորվում են հետևյալ ամփոփ կետերում՝ ա. Կոլեկտիվ-հանրային բնույթը, բ. Հորինման և ավանդման բանավոր եղանակը, գ. Ավանդականությունը, դ. Ավանդականության միասնությունը հանպատրաստից հորինմանը (տրադիցիա և իմպրովիզացիա), ե. Տարբերակայնությունը, գ. Անփոփոխայնությունը և փոխակերպումը (ինվարիանտ և տրանսֆորմացիա), է. Բանահյուսությունն իբրև փոխադարձ կապակցությունների առանձնահատուկ համակարգ, ը. Բանահյուսության կատարման եղանակները, արտատեքստային տարրերը, թ. Բանասացների տիպերն ու սեռատարիքային խմբերը: 4. «Բանահյուսության կապը ժողովրդական մշակույթի և արվեստի այլ ձևերի հետ» ենթամասում քննարկվում է խնդրո առարկա բնագավառի կապը ազգագրության, գեղարվեստական գրականության, նկարչության, քանդակագործության, զարդարվեստի, կիրառական տարբեր արվեստների, երաժշտության, պարային ու թատերական արվեստների հետ: 5. «Բանահյուսության տեղն ու արժեքը ազգային մշակույթի համակարգում» ենթամասում բանահյուսական բնագրերը կարևորվում են նյութական ու հոգևոր մշակույթի հետ սերտ առնչությամբ և արտացոլում են վերոհիշյալ բնագավառներին աղերսվող ժողովրդական ըմբռումները, հավատալիքները, իդեերն ու ձգտումները. «...բանավոր ավանդությունը հայ ժողովրդի պատմական ողջ գոյընթացում ակտիվորեն արձագանքվել է գրեթե բոլոր նշանավոր իրադարձություններին, սկսած Հայկ Նահապետի ազգածագման առասպելական վիպասքից, վերջացրած 19-20-րդ դարերում և անգամ մեր օրերն ընդգրկող՝ թուրք բռնակալների դեմ մղած ազատագրական հերոսամարտերին ու անվանի հերոսներին նվիրված երգերով ու զրույցներով» (էջ 42):

Ուսումնասիրության երկրորդ մասը, որը կրում է «Բանագիտությունն իբրև գիտություն և նրա տեղը այլ գիտությունների համակարգում» վերնագիրը, կազմված է վեց ենթամասերից, որտեղ համապատասխանաբար լուսաբանվում են ժողովրդագիտության սկզբնավորումը, վերջինիս անքակտելի մաս կազմող բանագիտությունը, որի զարգացումը կապվում է XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին եվրոպական գրեթե բոլոր երկրներում և մասնավորապես Գերմանիայում նոր թափ առած ռոմանտիզմի ուղղության հետ: Բանագիտության հիմնադիրներից են գերմանացի Գրիմ եղբայրները, հատկապես Յակոբ Գրիմը, որն իր «Գերմանական առասպելաբանություն» (1835 թ.) գրքով հիմնադրեց համեմատական առասպելաբանությունը կամ առասպելաբանական դպրոցը: Յա. Գրիմը և նրա տեսության հետևորդները ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի ստեղծագործությունների մեջ տեսնում էին իրենց ժողովրդի ազգային ոգու, նրա վաղ անցյալի կամ հնդեվրոպական նախաժողովրդի վաղնջական կենցաղի կենդանի հիշատակները: XIX դ. կեսերին բանագիտության հետազոտությունը դուրս է գալիս հնդեվրոպաբանության շրջանակից: Ստեղծվում է փոխառությունների դպրոցը, որի հիմնադիրն է գերմանացի արևելագետ Թեոդոր Բենֆեյը՝ մ. թ. III դարում կազմված հնդկական զրույցների «Պանջաթանթրա» («Հնգամտյան») խորագրով ժողովածուի գերմաներեն թարգմանությամբ (1859 թ.): Մյուժեների նմանությունը, հակառակ առասպելաբանական դպրոցի, Բենֆեյը բացատրում էր ոչ թե ժողովուրդների ցեղակցությամբ, այլ նրանց պատմամշակութային առնչություններով, փոխառություններով: Բենֆեյի՝ փոխառությունների դպրոցի սկզբունքներին հակադրվում է Է. Թայլորի և Հ. Մպենսերի՝ 1860-ական թվականներին հիմնադրած անգլիական մարդաբանական դպրոցը,

որը, համեմատելով իրարից հեռու, մշակութային զարգացման տարբեր աստիճաններին կանգնած ժողովուրդների ու ցեղերի հավատալիքները, առասպելները, կենցաղն ու սովորույթները, դրանց միջև հայտնաբերում է համաշխարհային նմանություն: Տեսական այս երեք գլխավոր ուղղությունների հիմքի վրա միջազգային բանագիտության մեջ առաջացան զանազան ենթատղղություններ, որոնցից նշանավոր են՝ աշխարհագրական-պատմական կամ ֆիննական դպրոցը (խոշորագույն ներկայացուցիչներն են Կ. Կրոնհեր, Վ. Անդերսոնը, Ա. Աարնեն, Ս. Թունիսոնը), պատմական ուղղությունը Ռուսաստանում՝ Վ. Միլլերի գլխավորությամբ, որը բանահյուսական նյութերի ծագումն ու զարգացումը կապում էր այն ստեղծող ժողովրդի պատմության կոնկրետ երևույթների հետ: Այսօր աշխարհում բանագիտության մեջ իշխում է տիպաբանական-համեմատական ուղղությունը, որը զբաղվում է բանահյուսական տարբեր ստեղծագործությունների տիպերի դասակարգմամբ և դրանց համեմատական քննությամբ:

Հայ բանագիտությունը ձևավորվել է XIX դ. կեսերին, միջնադարյան մատենագիրների ավանդած հին բանահյուսական երկերի ուսումնասիրությամբ (Մ. Էմին, «Վեպք հնոյն Հայաստանի», 1850 թ., Հ. Գալթրճյան, «Պատմութիւն մատենագրութեան հայոց», 1851 թ., Ս. Պալասանյան, «Պատմութիւն հայոց գրականութեան», 1865 թ.): Ժողովրդական նոր բանահյուսության կարգավորված հավաքումն ու հետազոտությունը սկզբնավորվում են Գ. Սրվանձտյանցով («Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», 1874 թ.), որը առաջ բերեց բանահավաքչական մեծ շարժում: Գ. Սրվանձտյանցի և նրա հետևորդների՝ Տ. Նավասարդյանի, Հ. Ճանիկյանի, Հ. Ալլահվերդյանի, Գ. Տեր-Աղեքսանդրյանի, Գ. Շերենցի, Գ. Բարխուդարյանցի, Գր. Խալաթյանցի, Մ. Աբեղյանի, Ե. Լալայանի և այլոց ջանքերով, հայ ժողովրդի տարբեր հատվածներից հավաքվեցին և հրատարակվեցին «Սասնա ծռերի» նորանոր տարբերակներ, մեծ քանակությամբ ժողովրդական հեքիաթներ, առակներ, առածներ, երգեր, հանելուկներ և կարճասույթ բանահյուսական բանաձևային նմուշներ: Կուտակված հարուստ նյութի ուսումնասիրության և միջազգային բանագիտության տեսական նվաճումների հիմքի վրա ձևավորվեց ու զարգացավ հայ բանագիտական միտքը: Խորհրդահայ բանագետները (Կ. Մելիք-Օհանջանյան, Ա. Ղանալանյան, Ա. Նազինյան, Ա. Մնացականյան, Ս. Հարությունյան և այլք), զարգացնելով դասական բանագիտության ավանդները, հիմնականում աշխատում են բանահյուսական առանձին ժանրերի գիտական համահավաք բնագրերի հրատարակության, ուսումնասիրության, գրականության ու բանահյուսական առնչությունների հետազոտման ուղղությամբ: Ուսումնասիրության երկրորդ մասի վեցերորդ ենթամասում, որը կրում է «Հայ բանագիտությունը» վերնագիրը, մեծանուն հայագետը մասնագետի և հայրենասերի հպարտությամբ ներկայացնում է հայ բանագիտության բոլոր երախտավորներին՝ իր ուսուցիչների և ապա գործընկերների ավանդը՝ հատուկ վերաբերմունք սերմանելով նրանց կատարած գործի նկատմամբ:

Աշխատանքի երրորդ մասը նվիրված է հայ բանահյուսության ժանրային համակարգին, բանահյուսության սեռերին ու հիմնական տեսակներին: Առանձին ենթամասերով ու համապատասխան ենթակետերով լուսաբանվում են նախնադարյան հմայական բանաձևերը, հայ հին դիցարանն ու առասպելները, հայ առասպելաբանության հիմնական գծերը, «Սասնա ծռեր» դյուցազնավեպի նախնական հիշատակությունները, գրառումներն ու հրատարակությունները, վիպասացները, նրանց հայրենիքը, լեզուն, պատումների

տիպաբանական խմբերը, հիմնական թեմաներն ու բովանդակությունը, վիպական բաղադրությունը և այլն:

Նույն մանրակրկիտ քննությամբ, Ս. Հարությունյանն անդրադառնում է հայկական հեքիաթների երեք մեծ խմբերին. 1) հրաշապատում կամ կախարդական հեքիաթներ, 2) կենդանական հեքիաթներ և 3) իրապատում կամ կենցաղային հեքիաթներ, ինչպես նաև ավանդություններին ու ավանդազրույցներին, առակներին, անեկդոտներին, վիպական, ժողովրդական երգերին, ժողովրդական երգերի կիրառական խմբերին, ասույթաբանությանը (պարեմիոլոգիա), առած-ասացվածքներին, հանելուկներին:

Գրախոսվող աշխատանքը նախատեսվում է բանագետ-բանասերների, ազգագրագետների, բուհերի բանասիրական ֆակուլտետների դասախոսների և հատկապես բանագիտության մեջ հմտացող երիտասարդ մասնագետների համար:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մարգիս Հարությունյանի «Բանագիտական ակնարկներ» ուսումնասիրությունը արժեքավոր ներդրում է հայագիտության, մասնավորապես բանագիտության պատմության մեջ: Համոզված ենք, որ այն լայն ընդունելություն կգտնի ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև նրա սահմաններից դուրս՝ սփյուռքահայության շրջանում:

ՀԱՅԴԱՊԵՏՅԱՆ Թ. Լ.

Բանասիրական գիտությունների թեկնածու